

Ճարտուիզ

Ձոր մը
որ ձոր չէ
այլ անդունդ վսեմ
Անհունի Դրան անասելի սեմ

Սուգում՝ դէպի գուտ իմաստներ բարձր
յուզում ջինջ ու սոսկ
յայտնութիւն

կարծր

Անկում վերացնող
տեսիլ երկնային

անոնք որ գիտեն
այդպէս կը նային

Ձոր մը

որ ձոր չէ
այլ անկէ անդին...

Եւ գուր է փնտռել փրկութիւն չորսդին

Պէտք է կանգնիլ հոն
ու նայիլ հեռուն
յանձնուիլ պահուան
սաստիկ հովերուն
ու դատարկել միտք, ուշք, սիրտ ու հոգի
դառնալ լեռնային սաւառնող ոգի

Բարձրացում խոնարհ
թռիչք ծնկաչոք
այնտեղ չաստուած էս
ու նաեւ ոչ ոք

Ձոր մը
 որ ձոր չէ
 այլ անուրջ կանաչ
 այլուր փոխադրող կամուրջ
 խոր հառաչ
 դէպի փրկութիւն նետուելու մարմաջ
 եւ հեշտ յարութեան մշտադալար խաչ

Այդտեղ իմաստը գուտ եւ սուրբ է դեռ
 ու կ'արձագանգեն զտուած խորհուրդներ
 այդտեղ մաքուր է անբիծ ամէն բան
 (իսկ մարդոց աղբը
 ոչինչ
 աննշան)

Ձոր մը
 որ ձոր չէ
 այլ խոհ մշտատանջ
 հաւատքի շարժում, օրհնեալ լերան լանջ
 արձագանգ անձայն
 լուր լուռ
 թաքուն կանչ
 եւ անյայտ լոյսի շնորհեալ ճաճանչ

Այնտեղ կը հասնիս տխուր, մտազբաղ
 ու յանկարծ սիրտդ կը ծփայ խաղաղ
 կը ջոկես հազիւ
 կը ցնծաս մեղմիւ
 իսկ մնացեալը՝ առկաիս
 յաջորդիւ

Այնտեղ կը կանգնիս մոլոր, վշտահար
 փորձութեամբ կրնաս նայիլ դէպի վար...
 Բայց իսկոյն կ'անցնին խոհերդ անկապ
 սիրտդ կը յորդի յոյսով հոյակապ

Փուշերը անգամ սիրուն են այնտեղ
 ծաղիկներու պէս կապոյտ
 գունագեղ
 իսկ անոնց խա՛յթը նոյնիսկ պէտք է քեզ
 որ չկարծես թէ պահը կ'երագես

Քարերը՝ այժմ խաղաղ
 գրկաբաց
 կը դիմաւորեն անցորդը յոգնած
 յենուելու համար
 քունի կամ նիստի
 կը հրաւիրեն անհոգ հանգիստի

Լեռներու մէջտեղ երկնային բացուածք
 վեհ վիհ
 խոր սլացք

Ձոր մը
 որ ձոր չէ
 այլ հուն ակունքի
 տեսք անիրական
 եւ ցոլք երկնքի

Աներեւոյթ եւ այդտեղ
 օդային
 ապաստան անյայտ
 շշունջ երկնային
 չունիս ոչ մորմոք ոչ մարմին ոչ ցաւ
 շուքն եւ ժայռերուն
 եւ գաղտնի անձաւ

Վար որ կը նայիս
 հոգիդ կը ծփայ
 ու կ'ելլէ վեր, վե՛ր
 երկնային ճամբայ

Արդէն այդ վարն իսկ կը տանի... վերեւ
 հերքելը գուր է
 ժխտումն՝ ի դերեւ

այստեղ որ այդքան քեզ կը տանի վեր
 թէ որ իջնես վար
 աւելի՛ն է դեռ

Ու այդպէս կ'իջնես
 անվերջ
 ժամերով
 փուշեր
 հեւք
 փռշի
 քրտինք
 քարեր
 հով

Եւ որքան իջնես այդպէս հեւ ի հեւ
 հոգիիդ բեռը կը դառնայ թեթեւ

Կ'իջնես ու կ'իջնես
 անծայր է ճամբան
 մինչեւ որ մոռնաս դուն քեզ
 ամէն բան

այդտեղ դեռ անբիծ, սուրբ ուղիներ կան
 եւ արահետներ անյայտ
 մոգական

Կ'իջնես ու կ'իջնես
 դէպի նոր բարձունք
 այստեղ ա՛լ չկայ գանգատ ու արցունք
 Ուսերուդ բեռն իսկ դարձած լայն թեւեր
 կը սկսիս ցնդիլ
 ծփալ դէպի վեր

Կ'ըսեն թէ վարը՝ այդ... այդ տեղն է վատ
 սակայն այ՛ս վարը՝ դրախտ է
 հաստատ

Կ'իջնես ուրեմն էապէս անդորր
 հոգ չէ՝ քայլ առ քայլ թէ թաւալգլոր
 կը սահիս, կ'իյնաս, կրկին ու կրկին
 աւելի մօտ ես սակայն երկնքին

Ու այդպէս կ'իջնես դէպի վար

Հիւնտտ

Երկնքէն անդին

Անոր

Տիրոջ մօտ

որպէսզի օծուիս, սրբուիս, զտուիս

Զոնցիկին ներքեւ

նոր մկրտուիս

Ձոր մը
որ ձոր չէ
այլ օրհնեալ տարածք
ցից խորք բարձրութեան
շրջուած սլացք

Այդտեղ ոչ ձոր է եւ ոչ ալ անդունդ
այլ զարթօնք ընդոստ
կանգնում

նոր ծնունդ

Կանաչը այդտեղ
կանաչ չէ իրաւ
այլ գոյն Խորհուրդի
երանգ երկնային

Այդտեղ ամէն բան ճիշդ է, իսկական
ամէն կողմ թաքուն, սուրբ նշաններ կան
անոնք կ'երեւան երբեմն նոյնիսկ
այս կամ այն բլրան լանջին վրայ իսկ

Արծիւներն անգամ
 այստեղ խոնարհ են
 չեն ճախրեր վերել
 կը թռչին
 վարէն

Կը ծփան դանդաղ
 ձորին մէջ խաղաղ
 մինչեւ մայրամուտ, մինչեւ մթնշաղ

Անոնց մէջ մերթ-մերթ կը յայտնաբերուի
 որպէս անստոյգ ցոլք, ճաճանչ հեռուի
 արծիւ մը սպիտակ
 ու ահա դարձեալ
 պէտք է նոր, ծայրէն
 ջանալ հասկնալ

Այս ձորը ձոր չէ այլ նաեւ խորան
 խաչակիրներու նորօրեայ օրրան
 մեր չաստուածները այստեղէն հասան
 շնորհիւ Տիրոջ
 հասան
 անսասան

Այս ձորը՝ Նոյեան Կատարն է մեր նոր
 մեր - մուրճէն ծագող – Լոյսերու շնորհ
 Հաւատքի ակունք, աղբիւր, անհուն հոր
 մեր ծարաւ հոգւոյ համար
- Յանուն Հօր -

Այստեղ սուտ չկայ
 - այդ մէկն ալ՝ ըսուի -
 կան բաներ սակայն որ... հարկ չէ լսուի

կան հին փամփուշտներ, հողին մէջ հետքեր
 եւ... կատարուածը

այն ինչ որ պետք էր

Այս ձորը եզր է
 մեծարանքի սեմ
 արեամբ կարմիր գորգ

տանող դէպի բեմ

Մուտքն է Պարծանքի
 - թող այդ ալ յիշեմ -
 Փառքի Դարպասի հրաշալի շեմ

Երկնային Պատուոյ Մեծ Դուռ եզակի
 այնտեղ պահուած էր Թուրը Կեծակի
 այս ձորէն ծնաւ Բարին քաջարի
 ու փախցուց յաւէտ
 բանակը Չարի

Լոյսի Ասպետներ բարձրացան այստեղ
 մութին, գիշերուան, խաւարին մէկտեղ
 եւ խորտակեցին Գիշերը ինքնին
 զայն մատաղ ըրին Ազգի Նոր Այգին

Հայոց զայրացած վիշապներն ահեղ
 գիշերուան խորքէն բարձրացան այստեղ
 ու իրենց շունչով, այս ձորի սեմին
 մարեցին հուրը լոկ ճեհեննեմին

Խօսքերը յաճախ զուր
մնացորդ են
բայց այստեղ արդեն
միշտ աւելորդ են


Ամեն բան ջինջ է այստեղ եւ յստակ
Աղօթք յաւիտեան՝ սուրբ Երկնքի տակ

Ամէն բան գուտ է այստեղ եւ անբիծ
Անհունը՝ մօտիկ, հարեւան, դրկից
ու ամենամեծ Աստղին հետ վսեմ
այստեղ ջան կ'ըսեմ
ու ջան կը լսեմ

2009 10 10
 2009 10 10
 2009 10 10

ալ ի՞նչ ըսեմ

Հատուած, «Ծ» գիրքէն՝



Հայրուկ Շամբեան, «Ծ» ,Ալպարթոս Հրատարակութիւն/ Ն.Ա.Մ., Արցախ, 2013